


# ՆԿԱՌԻՏԻՆ ՉԱՅՆԸ

ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԻԹ

Հ.Մ.Ը.Մ. Ի ՍԿԱՌԻՏՆԵՐՈՒՆ



Յ  
Ր  
Դ  
Ն  
Ե  
Ր  
Մ  
Ի  
Ն

ՅՕԻՈՒԱԾՆԵՐ ՈՒՆԵՆ

- Ս. Սապունեան
- Զ. Սեփանեան
- Կ. Թիւրքլեան
- Մ. Բարսեղեան
- Ռ. Ներսեսեան
- Ա. Պահարեան
- Յ. Տեյրումեան
- Ե. Էքիմեզեան

Պատասխանատու

ՎԱՐՈՒԺԱՆ ՀԱՆԷՍԵԱՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ

Վահե Ժամագործեան	Վահե Մարաշեան
Կարօ Թիւրքլեան	Ժիրայր Արապեան
Մակի Բարսեղեան	Սիրվարդ Սապունեան

Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

Ան որ կ'ուզէ բարձրանալ  
Գիշերները անքուն կ'անցնէ:

Այո՛, կ'ուզենք բարձրանալ եւ հասնիլ կատարելութեան, յաղթահարելով բոլոր դժուարութիւնները անխոր: Կամքը, յարատեւումը եւ աշխատանքի միացումը կը կազմեն մեր ուղին:

Միլ ենք տակաւին բայց կը հաւատանք որ կոչուած ենք ըլլալու հաստաբուն այն Կաղնին, որ պիտի կարենայ ամոքել մնալ եւ հովանին տարածել շրջապատին:

Արագ է այս մուտքը, բայց ջանալ է: Եթէ կ'ուզենք, պէտք է զոհենք առանց թուարկումի: Հետեւեալը ետ չնայինք: Մեր միջազգային նշանաբանը՝ ՄԻՇՏ ՊԱՏՐԱՍՏ՝, դործի վերածանք եւ յաջողութիւնը կրկնապատկուած է:

Մենք կ'աշխատինք այսօրուան եւ վաղուան համար, կը խրախուսենք նորահաս պատանին եք երիտասարդը որպէս սկսուտ: Մտածելակերպը արդէն կը նայ կերտել, անզուգական մօտեցում, համակրանք եւ սէր կ'ըլլայ իրար ընդունել ուզող լաւագոյն շաղկապը:

Ճիշդի, զոհողութեան/եւ սպառիչ աշխատանքի ծնունդը եղող՝ ՄԿԱՌԻՏԻՆ ԶԱՅՆԸ՝, մեր առաջադրանքներով կը դոյատեւէ առանց ամենազոյզն դժուարութեան:



ԱՐԿՈՆԵՔՆԵՐ



Հիւանդանոց երթալ ու տեսնել հայրս....:

Ուղեղս խորհրդածուիլներով կը ծանրաբեղնուի: Անակնկալ դէպքը այն- պիտի սոսկալի հարուած մը տուած է մտքիս, որ միշտ կը սպասեմ աւելի տխուր զիսուածի մը: Ինչպէս պիտի գտնեմ հայրս. բայց, արդէն ծանօթ է ինծի հիւանդուիլներ. ողջ է: Ե՞նչ մեռած:

Վերջապէս կանգ կ'առնէ հանրակառքը, կ'ըջնեմ ու կը սկսիմ քալել: Կը դառնամ փողոցին անկիւնը: Ահա հիւանդանոցին շէնքը, որ հակառակ իր շքեղ կառուցուածքին, Թախծալի շուք մը ունի:

Բազրիկներուն կը շնելով, հազիւ վեր կը բարձրանամ աստիճաններէն: Ներս կը մտնեմ երկար նորանցքէն: Սուր կսկիծ մը կ'առնայ սիրտս, երբ զինք տեսնեմ...

Բայց կը պատրաստուիմ զայնուհետև գուրդաբել: Փնտրողութիւն մէջ կը նկարեմ զԹուրեան քոյր մը, կը խնդրեմ որ նուազնորոգէ զիս հօրս սենեակը: Ի՞նչ անհամբեր կը կատարէ ինդրանոցս եւ դուռը փակելով կը հեռանայ:

Դանդաղ կը յառաջանամ: Մտածումներս մոռցնել կու տան ինծի զոյուիլներս:

Հայրս կռնակին վրայ տարածուած է մահիճին մէջ, բեռանը բաց, աչքերը փոքր: Սակայն կը շնչէ: Կը նստիմ քովի ա՞նուի վրայ եւ ինչ մեղք. 'Հայրիկ', 'Վա՛նք' քիչ մը կ'ընէ սթախելու, սակայն անողորմ զեղին ազդեցութիւնը յոյժ չի տար որ մը-տածումը խօսքի վերածուի:

Ժամանակը կը սահի դանդաղ: Գլխուն վերեւ, ուշադրութիւնս կը գրաւէ զիրք մը, որ ենթադրելի կու տայ ինծի, Թէ մինչեւ գործողութեան վայրկեանը կարգացած է:


Յանկարծ կը տեսնեմ, որ հայրս անկողնին մէջ շտկուելու փորձեր կ'ընէ: Կը բանայ աչքերը, կը նայի ուղղակի աչքերուս եւ շշնշէ. - 'Դուն հո՞ս':

Ժամ մը ամբողջ անշարժ ու լուռ կը նստիմ հօրս քով: Բայց ահա հիւանդաստ-հուհին ծանահարելով կը մօտենայ ու կռնակս Բախահարելով կը խօսի. - 'Օրիորդ, ժամանակն է որ հեռանաք: Ձեռ-հայրը կռնաք վտահիլ մեզի': Անոր հեղձակամ վարմունքը կը վիրաւորէ հայրս, որ միջամտել կը շանայ իր կցկտուր բառերով: 'Լուսին, Լուսին... սին... Թող... արդէն պիտի մեկնի':

Մեկնումիս, արցունքը աչքերէս յորդառատ կը հոսի: Ի տես դէմքիս արտա-յայտութեան, հայրիկս կը սփոփէ զիս. 'Սի՛ւրբ: Հայրիկդ նման բաներ շատ է տեսեր':

Ինչո՞ւ հայրիկ:

Մեր խորհուրդներուն խռովքը իրար չհասկցնելու համար, լուռութեամբ կը բաժնուինք:



3-  
ՎԻՇԵՐ ՅԵՐԵՎԱՆԻ ԿՆԵՐԱԿՆԵՐԷՄ

ԲԱՆԱԿՈՒՄԻ ԵՐ ՊԱՏՐԱՍՏՈՒԿ



Երկուշաբթի

Ժամը վեց է: Փողախորը դարձնումիս փողը կը շեփորահարէ: Աղմուկ եւ իրարանցումով վրաններուն վրէժ: Բոլոր քրտնաքաշներն են: Լուրջ զեղքերով տապալան: Տապալին արթնանալու փորձերն են: Բայց զիս շատ կը կարճուի: Ինչհարաբերը կը թուի անոնց: Նորեկներն են անոնք բայց շուտով կը վարժուին: Ինչհարաբերը անընդհատ աշխատանքի մէջ են արագ փայտեր կը նետեն կաշտաներուն տակը: Ժամանակը ուշ է անտր էր մինչեւ հիմա նախաճաշը պատրաստ ըլլար:

Փողը ճաշարան կը հրաւիրէ մեզ չորս 'Բաս' առանձին խմիչի:

Երէքշաբթի

Այսօր վերջապէս պիտի երթանք Մեղրաձոր: Բոլորը պատրաստ են. Բայց զայլիկներուն անհաբերութիւնը աւելի է միւսներէն: Նեղ արահետէ մը կը յառաջանանք: Գայլիկները ծառերէն բռնելով սահելով իրարու օգնելով կամայ կամայ կ'ըջնեն: Աւելի համարձակները արդէն առահետները ձգած 'Չաշխ' ճամբաները թռնած են: Կէս ժամ վերջ կը հասնինք ձորը: Գեղեցիկ է վայրը, իրապէս 'Մեղրաձոր' է: Կը նստիմք ակին մօտիկը եւ արդէն երգերը կը սկսին: Խանդավառուած է սկաուտը բնութեան այս զեղեցիկ տեսարանով, արդէն ինք ալ բնութեան զաւակ է: Ինչպէս միշտ, վերելքը աւելի դժուար է: Արահետը կը կորսնցնենք ուստի դժուար ճամբաներ կը սկսինք մագլցիլ: Մօտաւորապէս երկու ժամ վերջ կը հասնինք բանակավայր: Ճաշը տակաւին պատրաստ չէ ինչ ծոյլ են այսօրուան խոհարարները, անօթի ենք, չեն զիտեր:

Հազիւ ժամը չորսին կը ճաշենք բայց ինչ ակորժակով:

Չորեքշաբթի

Կը կարգամ ժամանակացոյցը 2.00-4.00 հանդիստ. վրաններէն երգի ձայներ կը լսուին. ժամանակը սպաննելու համար զայլիկներուն վրանները կը պտտիմ: Հինգ-վեց զայլիկներ հաւաքուած մեծ զայլիկի մը շուրջ, հէքիս մը-տիկ կ'ընեն: Հոն ծառի մը շուրջին տակ զայլիկներ երկնաքաշ կը թնաման. անուշ քուն: Սակայն աւելի հետաքրքրական է հոս, զայլիկներ ծառերու հաստ կեղեւներով կ'աշխատին նաւակներ, աղամաններ շինել յ զկելով այդ կեղեւը տեսէք Թէ զայլիկները անով ինչեր կը շինեն:

Հինգշաբթի

Երէկ զիշեր որոշան էի առաւօտեան մարզանքէն փախիլ: Դեռասանական բոլոր ձիւրքերս մէջտեղ կ'առնեմ, ինքզինքս հիւանդ ձեւացնելու համար. բայց կը ձախողիմ. չեն համոզուիր: Մէկ ժամ մարզանք կ'ընենք:


Որքան ծոյլ եմ աշխատանքէն փախելու միջոցներ կը փնտռեմ: Կ'երթամ ծառի մը տակ կը թնամամինչեւ կէսօր: Բախտես ռազակայուիլներս չի նշմարուիր:

Ուրբաթ

Վրաններու քնութեան մեր վրան ամենա ցած նիշը հաւաքեց: Քիչ մը կարմրեցանք ամօթէն ու որոշեցինք մեր աշխատանքի մեթոտը փոխել: Վրանի պատասխանատուն կրկին մեր միջեւ բաժնեց գործը. բայց այս անգամ տարբեր ձեւով

Յարաթ

Մեր վրանը այսօր խոհարար է: Զոհրապ. Ստեփանեան



Վտանգը, վախը, մինչև իսկ մահը թաշաբար արհամարհելու յատկույնը կորով կը կոչուի: Կորովի մարդուն հոգին այնպիսի նուրբ էր կ'առնէ որ այլեւս սահման չէր եւ իր անոր կարողութեան առջեւ, այնպէս որ սովորական արգելքները սարգ բան մը կը դառնան անոր ուժին առջեւ: Հոգիին այս զգացումը կորով կ'անուանենք: Անհրաժեշտ մէկ տարրն է ճշմարիտ յաջողութեան:

Նախօրէին Պոնտօսի անուամ մը, իմ բառարանիս մէջ անկարելի բառչկայ, յայտարարեց: Անոնք որ դժուարութիւնները անկարելիին հետ կը շփուեն, յիմարուիւն կը յայտարարեն այսպիսի արտայայտութիւն մը: Բայց անոնք որոնք ունին ճշմարիտ կորով եւ գիտեն թէ հաստատուն կամքի եւ յարատեւութեան տէր մարդիկ ինչքան ըրած են, այս բացատրութիւնը պարտական է նախ քան թէ քարտէսային զիմումը կը նկատեն:


Աշխարհիս վրայ անկարելի բան չկայ ընական կարողութիւններու մասին եղած բոլոր զրոյցները անարժէք կը մնան կորովի մարդուն զորութեան առջեւ. ան իր ունեցած կամքին շնորհիւ ինչ որ կը փափայ կրնայ ընել, եւ ինչ որ կ'ուզէ կրնայ ըլլալ:

Արդի մարդկային բոլոր շարժումներուն մէջ ճշմարտութիւնը եւ անկարելին իրարու հետ այնքան խառնուած են որ ոչ միայն մեծ դժուարութիւն եւ շրջահայեացութիւն կը պահանջուի զանոնք իրարմէ զանազանելու համար այլ մանաւանդ կորով անհրաժեշտ է, անիրաւուիւնը մերժելու եւ իրաւունքին պաշտպան հանդիսանալու համար:


Կան մարդիկ որ կը լսնդան անոնց վրայ, որոնք իրենց կորովին վրայ յենելով իրենց պատանի տարիքին իտէպ մը նշանաբան մը կ'ընեն: Մեր նշանաբանը 'Բարձրացիր Բարձրացուր', կորովամտութեան գաղփարականն է, որուն սերմերը արդէն իսկ կը տեսնուին հոս ու հոն աւելի կենսունակ աւելի ամուր:

Որչափ ապրինք այնքան աւելի կը համոզուինք թէ մարդոց մէջ երած տարբերութիւնը, մեծին եւ փոքրին, նշանաւորին եւ աննշանին մէջ, կորովն է, յարատեւ աշխատանքը որուն կը հաւատայ ու կը գործէ:

Սիրելի սկսուտ, բնաւ յանձն մի առնէր զորք մը, մինչեւ որ չզգաս թէ կրնաս եւ պիտի ընես զայն: Եթէ այդ զգացումը ունիս յաջողութիւնը ապահով է, եթէ չունիս՝ ճախողութիւնը անխուսափելի:




Կարօ Թիւթիւնճեան



Արուեստի զաղակարները եւ ճաշակի նոյնութիւնը, իրարու քով ուրած էր տարբեր նահանգներէ եկած Սոն եւ ձոնգին: Ասիկա փատահած էր Մայիսին, իսկ նոյեմբերին, ձոնգին նիհարութիւնը պատճառ կ'ըլլար որ ինքն ալ դառնայ այն անկողի հիւրին զոհեցնէ միայն, որ այցելած էր այս տարը, եւ կոչուած 'Յոգեբու բորբոս' բժիշկներու կողմէ. ձոնգին կը յուսահատէր եւ արդէն ինք զինք կը դասէր քեռելներու կարգին Սոնին յուսադրելու շանքերը կ'անցնէին ապարդիւն: ձոնգին սէր քեռելներու կարգին Սոնին յուսադրելու շանքերը կ'անցնէին ապարդիւն: ձոնգին երկնցած մահահին վրայ անդադար կը համբեր դիմացի ծառէն Թափուող քերելները 9-8-7-6: Սապակով վերջին տերելին, որուն հետ պիտի մեղնէր ինքն ալ, Սոն կը շրջապանանար ու կ'ընդհատէր զայն ապա կ'ընկեր վարդի յարկերը վերջին ընկերը ծերունկ Պրմանին կը տեղակացնէր իր ընկերու հիւն յուսահատութիւնը, եւ բժիշկին պատուէրը: Թէ միայն յոյսն էր որ կրնար փրկել զայն: Մերուկ Պրմանը ձայնողած արուեստագէտ մըն էր, բայց հակառակ ասոր անդադար կը ճառէր իր այն նկարէն որ դեռ պիտի ըծէր, ասան տարիներէ ի վեր սպասող պատահարն վրայ: Պրմանը կը լսէր անհրաժեշտութիւնները զինով գլուխով, ապա կը սկսէր պոռալ եւ ձոնգին կը կոչէր ան: Սոն տեսնելով որ ոչ մէկ օգուտ կրնար քաղել զինով ծերունկէն վեր կ'ելլէր:

Անցան երկու օրեր, ձոնգին կը դարմանար, նկարելով այն վերջին տերելը որ կը յամարէր մնալ ծառի զազաթին, հակառակ սոսկալի քամիին ու անձրեւին: Ու կը սկսէր ժպտիլ, որովհետեւ յոյսը հետզհետէ կը սպառնէր հոգիէն ներս: ձոնգին կ'ապաքինէր ու լսելով ծերունկ Պրմանին մահը, տեղեկութիւններ կ'ուզէր Սոնէն, որ արցունքը աչքերուն, կ'ըսէր. 'Սերունկ Պրմանը հիւանդանոց փոխադրուած առտուն, պարտիզպանը պարտէզին մէջ կը զտնէ փայտէ սանդուխ մը կը նստած այդ ծառին, վառած լապտեր մը, ցիւ ու ցան վերջինները եւ զեղին ու կանաչ ներկի խառնուրդ մը. ոչ սիրելիս, բնաւ չզատացար թէ ինչպէ՛ս կրնար այդ տերելը մնալ ծառին վրայ, անիկա Պրմանին գործն էր, վերջինս կրնար գծել ասան տարիէ ի վեր հոլոված նկարը. ատոր համար իր մարմինը քարկելով զիջեցած ձիւնին ու իր տխրած Թոքերը վարակելով այն հիւանդութեան, որմէ դուն բժշկուեցար:


ձոնգին կը փակէր իր աչքերը, ու արցունքները կը սկսէին հոսիլ,



Կիրակնօրիայ Օրագիր

Ինծի պատշաճ կիրակնօրիայ միջավայր մը ունիմ. Եկեղեցի, Ակումբ եւ Սինեմա: Երբ ժամը ինուկէս կ'ըլլայ կը հարուիմ եւ կ'ուղղուիմ ակումբ ալեկողը սեպելով երջալ եկեղեցի, որովհետեւ եկեղեցական արարողութեան մը արդէն ներկայ զոնուած էի երազիս մէջ: Կր մտնեմ ակումբի դռնէն եւ կ'ուղղուիմ ձայն կողմի սենեակը. սենեակ մը, զոր շատ սիրեցի, որովհետեւ անոր զտնուող բաժակներու: Անոնցմէ ամէն մէկը վկայութիւն մըն է Հ.Մ.Ը.Մ. ի յաղթութեան եւ զօրութեան: Նոյնպէս կը կարծամ մեծ պահարանին վրայ գրուած նշանաբանը. 'Բարձրացիր, Բարձրացուր', որ եւ ասուողիչ երգումը: Աստուած եւ հայրենիք. ահա կիանքի առանցքը Հայուն: Ամէն շանք կը քափէ որպէսզի ազգայնական ոգիով սնուցանէ նոր սերունդը, զանոնք նկատելով ապագայ ժողովուրդին սիւները, որոնք պիտի կերտեն յաղանակը վաղուան: Այս մտածումները տակնուվրայ կ'ընեն միայն ու ներաշխարհս:

ԱՄՊԵՐ  
ԿՆԵՐԱՅԵ



1879 - 1955

Յաճախ կը լսենք հանրածանօթ այս մեծ գիտնականին ու հռչակաւոր ուսողութեան վարպետին անունը; որ մարդկու շեան պատմութեան մէջ անկիւնադարձ մըն է:

Այնշրայն ծնած է Գերմանիոյ մէջ: Մինչեւ վեց տարեկան բժամիտ մանուկի հարազատ տիպարը եղած է: Բայց ատկէ ետք յեղաշրջումով մը կարծես կը փոխուի եւ կը սկսի յայտնել կարծիքներ: Նախակրթութիւնը կաւարտէ տկար արդիւնքով եւ երբ կը մասնակցի Ջրէրիլի համալսարանի զեղարուեստական բաժնի մուտքի քննութեան... կը ձախողի:

Այս բոլորը շատ կը մտահոգէին ծնողքը, որոնք իրենց որդիին մէջ ինչ-որ բան տեսնուած էր: Բայց պատահեցաւ որ Այնշրայն ըլլալով սրբութիւն, մտնելու եւ Կոպերնիկոսի անունը հետ մըրցող բացառիկ եւ տաղանդաւոր գիտնականը:

Այնշրայն կը հաւատար երկու սկզբունքներու, որոնք իր կարծիքով երրորդ մը չունին:


- 1.- Հեռանալ սովորական պարզ օրէնքներէն:
- 2.- Մեկնակէտ չունենալ ուրիշներուն կարծիքներն ու տեսակէտները:

Այս ձեւով ան կը հակասէր համայն մարդկութիւնը: Կատէր դրամը, բայց կը սիրէր աշխատանքը: Ցնցոտիներ կը հազուէր ու կը յայտարարէր թէ ԵՐՋԱՆԿՈՒԹԻՒՆԸ ՊԱՐՁՈՒԹԵԱՆ ՄԷՆ ԿԱՐԵԼԻ Է ԳՏՆԵԼ:

Այնշրայն կարգ մը տեսութիւններով շլացուց իր շրջանի գիտնականները: Օրինակի համար համեմատութեան տեսողութիւնը, զոր մօտաւորապէս համայն աշխարհի մէջ, 15 անձեր հասկցած են: Բացմա՞նիւ են նաեւ այն զիջքերը, որոնք գրուած են բացատրելու Այնշրայնի բարդ տեսութիւնները, որոնք այնքան պարզօրէն ներկայացուած են իր, Այնշրայնի կողմէ:

Թարգմ. Յ. Տէյիւրմէնճեան

ՄԱՐԱԳՐՈՒԹԻՒՆՍ Այնշրայնը ներկայացնող այս սամփոփ Ծարգամանութեան նկատի ունի գիտական տեսութիւններ պարզաբանող յաջորդական յօդուածաշարք մը, որ յաջորդ թիւով իսկ պիտի սկսուի հրատարակուիլ:



ՄԱՐԱԳՐԱՆ ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ . . .

--- Ձեխոսլովաքիոյ փրակա քաղաքի Սոբոլներու: Ստարտակ: խումբը, Հալէպի մէջ Հ.Մ.Բ.Մ. -ին 6-40 յաղթելէ մեկնադաւ համասկոս: Մարտի 19-ին Պահակագիւղի մէջ խումբին հետ մըրցելու: Հոն 5-0 յաղթանակ ապահովեց 5-0 արդիւնքով: --- Ուրբաթ 29 Յունուարին, Հալէպի Բաժակի մըրցումներուն Ասորիները յաղթեցին Վասպուրականին 1-0 արդիւնքով:

--- Սերբի կաթոլիկի կազմակերպած մըրցաշարքին մասնակցեցան հետեւեալ խումբերը. - Հ.Մ.Բ.Մ., Հ.Մ.Մ., Հ.Ե.Բ., Ահլի, Սերբի: Մըրցումները տեղի ունեցան մարմուն վարժարանի զոյ դաշտին վրայ: Երկուշաբթի, Երեքշաբթի եւ հինգշաբթի օրերը: Այս մըրցումները տուին հետեւեալ արդիւնքները. -

ԲԾ. 25-1-65	Հ.Մ.Բ.Մ.-Հ.Մ.Մ.	48-50	յաղթական Հ.Մ.Մ.
ԲԾ. 25-1-65	Հ.Ե.Բ.-Ահլի	56-59	,, Ահլի
ԳԾ. 26-1-65	Հ.Մ.Մ.-Սերբի	81-81	,, Սերբի
ԳԾ. 26-1-65	Հ.Մ.Բ.Մ.-Հ.Ե.Բ.	82-88	,, Հ.Ե.Բ.
ԵԾ. 28-1-65	Հ.Մ.Մ.-Հ.Ե.Բ.	44-40	,, Հ.Մ.Մ.
ԵԾ. 28-1-65	Սերբի-Ահլի	76-87	,, Սերբի

Այս ձեւով Սերբի կապահովէ այս մըրցաշարքին անոյանութիւնը: Իսկ յաջորդական դասաւորման համար Հ.Մ.Բ.Մ.-Հ.Մ.Մ. հանդիպումը տեղի չունեցաւ:

--- Սուրբի աւարտական երջի մըրցումը տեղի պիտի ունենայ 14 Մարտ 1965-ին Հալէպի մէջ: Հ.Մ.Բ.Մ.-Ահլի-ին միջեւ: Իսկ դարձի մըրցումը 17 Մարտին Տամասկոսի մէջ:

--- Գաւուռայի Յուր Պուլի անոյանական մըրցումները աւարտեցան Հ.Մ.Բ.Մ. Սոնթրալի յաղթանակով, վերջին խաղին պարտութեան մատնելով Սեմեպս խումբին 3-1 արդիւնքով:

--- Լոս Անճելըսի անոյանական խումբերու պարագլուխն է Հ.Մ.Բ.Մ. Ը յը վերջին մըրցումին յաղթեց Հոնկարիա զօրաւորման միջակիցին:

--- Բաղաքի Բաժնի խումբերէն նապաստակ յաղթեց Վազրին ֆինկ-ֆոնկի հանդիպումի մը մէջ:

Հ.Մ.Բ.Մ. - ՍՊԱՐՏԱԿ  
հանդիպում

Հ.Մ.Բ.Մ. - Սպարտակ / Ձեխոսլովաքիա / սպասուած մըրցումը տեղի ունեցաւ կիրակի 24 Յունուարին. Կ.Վ. Ժամը 2.30-ին: Հակադակ անպաստ օդին ստուար բազմութիւն մը փութացած էր հետաքրքրական մըրցում մը դիտելու: Ներկաներուն մէկ մասը թրիւպինէն դուրս պատսպարուած կը մնար հովանոցներու եւ վերարկուներու տակ:

Նահանգապետի ժամանումէն վերջ օրուան իրաւարար Սարժմ Եյմը Ի առաջնորդութեամբ խումբերը դաջտ իշան: Յուշադրօշի փոխանակումէն քիչ վերջ խաղը կը սկսէր:

Մըրցման առաջին վայրկեանները խիստ հետաքրքրական անցան: Հիւր խումբը, արագ բասարկութեամբ կը շանար իր գերեկայութիւնը հաստատել միշտ հանդիպելով տոկուն յետսպահ զօր դիմադրութեան: 10-րդ վայրկեանին զօրաւոր 2-ի-1-ով մը արձանագրուեցաւ խումբին առաջին կէտը:

Դաշտը փոքր լճակներու շարք մըն էր ու խաղացողները ստիպուած էին հնազանդիլ զնոյակին զմահաճոյքներուն: Կարծես այս դժուարութիւնը մասնաւորութեամբ ըլլար Հ.Մ.Բ.Մ. ին, որովհետեւ Սպարտակի մարզիկները սովորական խաղարկութեան մը Պարզութեամբ չեն ուշացներ իրենց երկրորդ կէտը, 30 եարտէն:

# ՄԱՍՆԱԳՐԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Բերդապահ Անդրանիկը, հակառակ իր շտապերուն չի կրցաւ գրգռել շագ սահուն գնդակը: Նոր թափով կը շարունակուի խաղը: - Հ.Մ.Ը.Մ. ի մարզիկները նոյն- իսկ կը նեղեն Սպարտակի բերդը, բայց կէտը կուշանայ:

Կիսախաղէն վերջ, մարտուող անձրեւին տակ, ձեխով ներկուած մարզիկ- ներով, հետաքրքրական անակնկալներ կը պատահին: Ի նպաստ Հ.Մ.Ը.Մ. ի սուլուած բենալի մը Գոգոն չի կրցաւ կէտի վերածել: Տասը վայրկեան վերջ Սպարտակի ի նպաստ սուլուած բենալիով կը նշանակուի խումբին 3-րդ կէտը: Զէր ուշանար եւ 4-րդ կէ- տը նոյնպէս բենալիով:

Ասկից վերջ Հ.Մ.Ը.Մ. խմբային խաղադրուիչները կը տկարանայ ու նոյնիսկ երբեմն կը կորսուի: Անհատական ճիգերով չեն կրնար ճեղքել զօրաւոր յետ- սապահ զինքը:

Անձրեւը, \*լճակները եւ անզուսպ գնդակը կը կռավարեն խաղը: 5-րդ կէտէն վերջ բերդապահ Յարութիւն կը փոխարինէ Անդրանիկը: Գլխով գեղեցիկ կէտ մը Սպարտակի հաշուոյն... եւ խաղը կ'աւարտի:

Խումբի կարողութիւններուն շուրջ կասեցածիլ անտեղի է. բայց նոյն- պէս կարելի է մտածել թէ չոր դաշտ մը արեւօտ օդով կրնար արդիւնքն ալ \*շերմացնել: Գնդակին երբեմնի խոյանդները, յաճախակի ղանդադումները, ե՛նէ երբեմն զսպուեցան Հ.Մ.Ը.Մ. ի խաղացողներու կողմէ. բայց երբեմն ալ կէտերու պատճառ դարձան:

Հիւրերէն ուշադրաւ էին թիւ 5-ը, 11-ը, 8-ը, որոնք թէքնիսիէն՝ Եուրպոլիստի իրենց միջազգային համբաւը կրկին անգամ հաստատեցին:

Հ.Մ.Ը.Մ. ի խումբէն ուշադրաւ էին Անդրանիկ Բերդապահ /, Մորիս, Վազգէն, Գէորգ եւ Գոգոյ:

Անձրեւով համեմուած՝ այս խաղէն փորձառութիւններու ճոխ պաշարով մը Հ.Մ.Ը.Մ. ի խաղացողները դաշտէն թափուեցան:

ԱՆԴՈ

----- ԱՌԻՐԵՐ ԱՌԻՏ ՊՈԼԻ ԱՄԽԱՐՀԵՆ -----

--- Բարեկամական մրցումներու ընթացքին Հ.Մ.Ը.Մ. թէյրուլի / հաւասարած է Ռասինկի հետ 0-0: Իսկ ԱՍԶՐԱՍԻ հետ 3-0 ով յաղթած է: Նոյն հանդիպումներու ընթացքին յաղթած ՍՆՅԱ-ի 2-0: Իսկ ՆՃՄԵԻ նոյնպէս 2-0 արդիւնքով:

--- Ֆետերասիոնի կողմէ կազմակերպուած 30 վեարկանոց Թուրքիոյ մրցաշարքին Հ.Մ.Ը.Մ. յաղթեց Անդրանիկի 1-0: Իսկ հաւասարեցով ՄԱԶՐԱՍԻ հետ, բարդ թաշելով յաղթած է: Սառա պարտուած ըլլալով Հ.Մ.Ը.Մ. էն կորսնցուց անո- յանուլիեան բաժակը:


--- Երբեմնի / թէյրուլի / ԱՊԻ ՇԱՀԼԻ բաժակի մրցաշարքին մասնակցե- լան չորս խումբերը: Իրոն անխոյանութիւնը ապահոված է Հ.Մ.Ը.Մ.:

--- Պէյրուլի 1965 ի անխոյանական մրցումներուն Հ.Մ.Ը.Մ. յաղթեց Անդրանիկի 3-0: Իսկ նոյն մրցաշարքի տակաւին անաւարտ կը մնայ:

--- Բարեկամական մրցումի մը ընթացքին Սաքէս պարտուած է Հ.Մ.Ը.Մ. էն 3-1 արդիւնքով: Այսպէսով Հ.Մ.Ը.Մ. տարաւ իր 12-րդ յաղթանակը 1964-էն ի վեր:

Պէյրուլի

ԱԲՕ



Մայրը պառկածէն կողմին մէջ աչքերը զոց ձեռքերը խաչածել: Հայրը ըսաւ որ մաման այլեւս պիտի չարնար վերջին անգամ կրնար գրկել մաման, համբուրել երէ կ'ուզէր:

Առիթը պէտք չէր փակցներ, երէկուրնէ ի վեր չէր տեսած աղուորիկ մաման որուն, երկնքին չափ կը սիրէր: Անմիջապէս հօրը գրկէն վար սահեցաւ մօտեցաւ անկողնին: Կոյշ բայց արագ, շփիկ տարաւ դէմքին, շոյեց այտերը մխրճեց մազե- րուն մէջ, մաման չէր շարժեր. դէմքը կը ժառնգ սակայն, ճիշդ պնայէս երբ կը կանչէր զինք ու աչքերը զոց կը սպասէր:

--- Մամա, մամա... պատասխան չկար, մամա եկայ ալ չար չեմ ըլլար քե- ղի չեմ նեղադներ, ելիր, արնցիր չէ՞ որ այսօր պտոյտի պիտի երջայինք, նայէ անձրեւ չկայ արեւ կայ: Սակայն մօրը լուռ անշարժութիւնը զինք յուսահատեցուց սկսաւ լալ կրկնապատկուած աղերսանքով:

Մեծ մայրը փորձեց մօտենալ հայրը անխօս արդիւնք: Քահանան արդէն բա- ւական ուշադրած անհանգիստ շարժումներ կ'ընէր: Հրայրին լաղը լուռ միջաւանքի փոխուած էր: Հայրը մօտեցաւ զինք շարժումով մը կանչեց Մեծ մամիկը եւ փսփո- սուցով թելադրեց որ հեռացնէ ղայն: Հրայր երբ զգաց որ զինք կը թարձրացնեն ա- ւելի ամուր փափուեցաւ մօրը վզին: Զէր ուղեր բաժնուիլ, իր մանուկի հօգին կը նախազգար որ իրաւ այլեւս պիտի չտեսներ ղայն, իսկ այդ զգացումը զինք կը սար- սափեցնէր:

Հօրը, զինք հեռացնող ձեռքերը մեծ մայրն, սկսան շոյել զինք ընդհատուած փաղաքշանքի ղարկերով. եւ երբ Հրայր լուրջ, հայրը մօտեցուց շոյեցերը ականջին ու փսփոսաց, Հրայր ղուն պիտի չլատ: Զէր ստատահած որ հայրը այնպէս սօսած ըլլար ան ընդհանրապէս լուռ էր, մտածկոտ եւ խստահայեաց: Այս մեղմութիւնը զինք ապշեցուց գրեթէ եւ անզուսպար կրնեցաւ հօրը ձեռքերուն:

Հայրը զինք Մեծ մամա ին տուաւ որ տանի:

Առօրեայ սենեակին մէջ անկողին մը կար փռուած. բոլոր օրերուն պէս զիշերանոցն իր չհագուեցաւ կեկո: Երաւ անկողնին մէջ Մեծ մամային քով. թիջ մըն ալ հեկեկաց ու քնացաւ:

Երազները չարչարեցին զինք. Բրդուին հետ կը խաղար, ժամանոր հահելի էր յանկարծ Բրդուտը կը կատողէր կը թածնէր ձեռքը:

Մեծ մաման կը քնացնէր զինք: Այս անգամ կը կերակրէր ոչխարներն ու եզները կը մօտենար շոյելու մէկուն կոտորները բայց անոնք կը մեծնային աչքին ու կը փորձէին զինք կոխկրտել:



Մեծ մաման զինք կրկին կը քնացնէր...

Սաբաւներ Հրայր տունէն դուրս չելաւ: Զէր ուտեր, չէր խաղար, երբեմն խնդրէր մեծ մօրմէն՝ կ'աղերսէր քղանքներէն բռնած: Մեծ մաման կ'աշխատէր տարբեր ձեւով զբաղեցնել զինք, անօգուտ:

Վերջապէս գտան ձեւ մը զինք խառելու ըսին որ մաման շատ հեռու տեղեր գացեր է, օր մը մաման ան պիտի գայ, բայց ե՞նչ լսէ որ Հրայրը շատ կու լայ եւ զինք շատ կը փնտռէ կը նեղուի ալ չի գար ու բերելիք աղուոր հաղուստները նոր կօշիկները կը տանի: Ինչեւ իր հոգին հանդարտած չէր բայց հաւատացածէր եւ սկսաւ սպասել:

Ամէն օր քանի մը անգամ Մեծ մամանին հետ պտոյտի կ'երթար զանազան ուղ - դուրիւններով որպէսզի ե՞նչ մաման զայ համբուլ վրայ ռիմաւորէ:

Մըջան մը հայրը չերեւաց: Մեծ մամային հարցուց թէ ուր է պապան ըսաւ որ վաղը կուգայ բայց վաղերը միշտ կրկնուեցան:

Յետ միջօրէ մը երբ զարձեալ իրենց սովորական պտոյտը կ'ընէին հեռուէն կ'տեսնէին երկրէն մէկը երեւելու: Ու դիտել անոր ուղղութեամբ սկսաւ վազարու թեմբ սկսան զիտել զինք, երբ մօտեցաւ Արչ -

Պապան է բացառանչեց Հրայրը ու ինքն ալ ձուած Մեծ մամային ձեռքը ուղղուեցաւ նոյն ճամբով...

Պապան դաշոյն մը ունէր մէջքէն կախուած, փրիչ մը կը հանդէր ուսին: Երբ իրարու հասան պապան մէկ կողմ ձգեց փոխը եւ զրկելով Հրայրը վեր բարձրացուց: Առաջին անգամ ըլլալով Հրայրը զգաց իր այտերուն, աչքերուն եւ շրթներուն վրայ պապային զորովաբին համբուրները:

Տունէն ներս մտան առանց խօսելու: Քիչ ետք Մեծ մաման շնչահատ ծանր փրիչը շալկած հեռուէն երեւցաւ:

Հրայրը քեզի այսօր աղուոր պատմութիւն մը պիտի պարմեմ. ըսաւ պապան զինք ծունկերուն վրայ նստեցնելով:

ՀԱՌՅԱՐԱՆ ԹԻՒՆ - 2 -ի ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

- 1.- Որսորդը 57 քմ. հիւսիս ուղղուելէ ետք կը ըտնուէր հիւսիս-սայիս բեւերի առաջին շրջափոխի շրջանին մէջ, որուն երկարութիւնը 20 քմ. է: Հետեւաբար քսան քմ. դէպի արեւելք ուղղուած միջոցին իր ճամբան կ'անցնէր շրջափոխի վրայէն:
- 2.- Ս. Գրքէն վերջ ամենաշատ սպառուած ունեցող գիրքը եղած է «Փրիչ Սիֆա», գիրքը: Հեղինակը ՌԻՔԼԻՏՆ է:
- 3.- Որեւէ երկիր պատերազմ կը յայտարարէ յարցելու համար:
- 4.- Մարզարէին Մէքքէ մուտքը, Օմայեան իշխանութեան կործանումը, Աբբասեան իշխանութեան կործանումը:
- 5.- Նամակին հեղինակը Երուանդ Օտեանն է:

Այս հարցարանին լաւագոյն ձեւով պատասխանած է եղբ. Համազասպ Գասպարեան: Իր նուէրը ստանալու համար պարտի դիմել խմբագրութեան:

ՀԱՌՅԱՐԱՆ ԹԻՒՆ - 3 -

- 1.- Արժեւորել հետեւեալները, իւրաքանչիւրը ամփոփ ձեւով. - Սոճողէս, ձոն Տալլըն, Իպն Սինն:
- 2.- Յիշել երեք թուաբանագէտներ, որոնք ապրած են Քրիստոսէ առաջ եւ որ կը համարուին երկրաչափութեան հիմնադիրները:
- 3.- Առաջին Ողոմպիական Հանդիպումները ուր, երբ եւ որ թագաւորի հովանաւորութեամբ տեղի ունեցաւ:
- 4.- Որ ճիւղը ամենաշատ ՕՍԲԱՐ շահած է; 1964ին:
- 5.- Լուծել հետեւեալ խաչբառը.

Հիրոզոնսկան.

	1	2	3	4	5	6	7
1							
2		■		■		■	
3							
4					■	■	
5			■				
6							
7							

- 1.- Հայկ. ձակատամարտ մը:
- 2.- Թանկագին քար մը:
- 3.- Գիր մը աւելցնելով երեւիլ:
- 4.- Հակառակին գիր մը աւելցնելով ժամանակ. Անդ:
- 5.- Մեր հայրենիքը առանց վերջի գիրին:
- 6.- Քրեական դպրոց:

- Ուղղահայեաց.
- 1.- Հայաստանի գետերէն:
  - 2.- Միջոց:
  - 3.- Միտ - Հակառակը բացակաս չուրիւն:
  - 4.- Գիր մը աւելցնելով սնունդը հիւսնէ: Գիր մը աւելցնելով հակառակին Օտար լեզուով կը նշանակէ կորկնել:
  - 5.- Ահաւասիկ - Մեր Թագաւորներէն:
  - 6.- Գնահատման միջոց:
  - 7.- Մեր Թագաւորներէն պառջին գիրը փոխելով:

Կտրոնը հարցարանին ընկերանելու է:



# ՇԱՐՄԱՆԿԱԲ



Կան պատուար Թիմեր, որոնք բեմադրուած են առանց դժուարութեան եւ մեծ ծախսերու: Ուրիշներու պատրաստութիւնը տեւած է տարիներ եւ արժած մեծ գումարներ, որոնք մէջ Միութեան Ան Տը Պաուսթի, Պատերազմ եւ Խաղաղութիւն, եւ Կը- ղէոպատրա, եւայլն:

Սամբըսէթ Մոսմի, Ան Հիռմն Պանտէճը, Ստրկութիւն մարդկային, սիրոյ ղըբերգական այն պատմութիւնն է, որ պատրաստուած է վերջերս, ուր կերեւին Լորանս Հարւի բժիշկ ուսանողի ղերով իսկ Քիմ Նովաք առած է սպասուհիի ղերը:

Վէպին հոգեբանական վերլուծումները եւ առեղծուածային բաժինները մեծ տաղտուկ ստեղծեցին, դժուարութիւններ առաջացուցին, որմէ յուսահատ կարգ մը բեմադ- րիչներ հրաժարեցան պատրաստութիւնը ստանցնելէ: Նովաք Նոյնիսկ դժգոհ լքեց սրահը, բայց շատ քանցած կրկին վերադարձաւ: Բոլոր բարդութիւնները տեղի տուին երբ բե- մադրութիւնը ստանցնեց Քէն Հիւկէ: Վերջինս արդէն ճաչցուած բեմադրիչ է եւ իր բե- մադրութիւնները անբացառ արժանացած են ղնահատանքի լաւագոյն ղնանադատներու կողմէ:

Երբ վէպին հեղինակը լսեց, ըսաւ.— Այս վէպը, ղոր կը շանք պաստաղի վերածել իմ կեանքս էր ասկէ եօթնասուն տարիներ առաջ:

Անհրաժեշտ կը ղեկատնք այն պատկերին յայտնութիւնը, որովհետեւ մեր ներկայ յու- ղող ղնկերային ղխաւոր ախտերէն մէկը կը նկատուի անոր մէջ ներկայացուող երեւոյթ- ները: Թէեւ կը ղառագանցենք բայց կուզենք հանդիսականներու ուշադրութիւնը կեդրո- նացնել, ցոյց տալու այն անբարոյ արարքները, որոնք կը կործանեն երիտասարդութիւնը, նոյնիսկ, մտացի եւ հասուն բժիշկներ:

Թիմին նիւթը իրապաշտ է եւ արդէն ասոր կը պարտի իր յաջողութեան մեծ բաժինը եւ կրնայ լաւագոյն օրինակը ըլլալ բոլոր երիտասարդներուն:

## ԿԱՐՁ ԼՈՒՐԵՐ


—Չարլըս Հէսթըն պաստաղի վրայ պիտի երեւի Միքել Անճելոյի ղերով, Յոքս- ղնկերութեան պատրաստելիք, Տհի Ակոնի Անտ Էքսթէսի, Թիմին մէջ: Թիմը պիտի նկարուի Իտալիոյ մէջ, ուր կը գտնուին Անճելոյի ղուրթ գործոցները: Թօտ—ԱՅ 70 մ.մ.նոց այս Թիմին բեմադրիչն է Բարոլ Ռիիտ:

—Լիզա Սիակրամ եւ Րոպէրթ Թէյլըր առաջին անգամ ըլլալով միասին կը հան- ղիպին, Է Հաուզ իգ նաթ է Հօմ, Թիմին մէջ:

—Սիթիճըն Պոյտ համաձայնած է Յոքս ղնկերութեան հաշուոյն խաղալու արտա- սովոր Թիմ մը շարժանկարի մուշեան մէջ: Ան կերեւի ամերիկեան ղաղտնի սպասար- կութեան պաշտօնեայի մը ղերով Թանթէսթիք Վոյէշ, Թիմին մէջ:

—Առաջին Սուրիական ղունաւոր Թիմը, Աքքոտ Լուրու, խաղարկութեամբ Յահո Պալանի, Սամիբա ԹաուԹիթի եւ Տըրէտ Լահհամի մեծ ժողովրդականութիւն ղտած է:

ԴԻՏՈՂ



# ՍԿԱՌՈՏԱԿԱՆ ԱՐՁԱԳԱՆԳ

ԱՐՄԻԻ.— Ընդհանրապէս ուսանողներէ կազմուած այս խումբը կէս տար- ւան կեանք ունի: Այժմու պատասխանատուն է եղբ. Վարուժան Հանէսեան, օգնա- կան ունենալով եղբ.ներ Մ. Թասլաքեան եւ Եթիմէզեան:

Այս տողերը գրուած պահուն տակաւին Արծիւ խումբը իրմէ սպասուած նախանձելի ղիրքին վրայ ղէր գտնուէր: Կը յուսանք, որ սկաուտական ղործունէութեան այս նոր շրջանին նՈՐ ԹԱՓՈՎ ու ԱԱՐՁՐ ԹԻԻԶՐՈՎ Արծիւ պիտի շինէ իր ամուր ԶԼ տոկուն բոյնը:

ՆԱՊԱՍՏԱԿ.— Մարդական խաղերու մէջ յաճախ յաջողութիւններ արձանգ- րած եւ իր սկաուտական ղործունէութեան համար ղնահատանքի խօսքեր ստացած այս խումբը պատանութեան տարիքը թեւակոխող սկաուտ եղբայրներէ կազմուած է ղրեթէ: Տարուանըրոյր եղանակներուին կուենայ սկաուտները հետաքրքրող, եւանդ ու խանդավառութիւն առաջացնող ձեռնարկներ: Իր վերջին ձեռնարկը Վազր խումբին հետ կիսնկ փոնկի հանդիպումն էր: Ժողովներու ղնացքին եղող ղասախօ- սութիւնները ղնդհանրապէս վըլլան սկաուտական ղիտելիքներու շուրջ:

Խումբին պատասխանատուն է եղբ. Եփրեմ Մելքոնեան: Օգնական աստիճանաւորները հետեւեալ եղբայրներն են.— Վ. Պէքէրեան, Զ. Պոյահեան, Ս. Գէոզկէրեան, Յ. Սարգիսեան, Ա. Իսրայէլեան, Յ. Տէրյակոբեան:

Յաջողութիւն կը մաղթենք:

ԵՂՆԻԿ.— Պէտք է ըսել թէ այս խումբին ղէպի տիպար խումբը առած ղայլերը եղնիկի անուան հետ Կթ ղեն ղնթանար, մանաւանդ երբ նկատի ունինք հոն ղտնուող ուժերը: Երբեմնի պայծառ յաջողութիւնները անբաւարար են նման խումբի մը պարագային եթէ սոյն խումբին սկաուտ եղբայրները իրենց խօսքերը կամքով շաղախած ղործեն:

Խումբը ղնեցաւ իր նոր պատասխանատուն՝ եղբ. Վահէ Ժամադործեանը: Իր եւ աստիճանաւորական կազմին համադործակցութեամբ վստահ ենք որ Եղնիկ կը տիրանայ իր անցեալի նախանձելի ղիրքին:

Խումբին աստիճանաւորական կազմը հետեւեալն է:— Եղբ.ներ,— Կ. Արծիւեան, Կ. Հատիտեան, Զ. Սարգիսեան, Միշէլ Սպապաղեան, Սարգիս Հայրա- պետեան, Ս. Ակիլեան, Գ. Հալահեան: Այս կազմը կրնայ հրաշքներ ղործել:

ՎԱԳՐ.— Բաղաքի բաժնի աստիճանաւորներ տուող ղրեթէ միակ խումբը եղած է: Այժմ թէեւ նախկին ճոխ անուանացանկը ղկայ այլեւս, բայց կը շարու- նակէ Վազրի հաստատ ու հեռատես ղայլերով հարատեւել:

Պատասխանատուն՝ եղբ. Գէորդ Գաթարոյեան կարելին կընէ, եւ իր շանքերը նեցուկ ունին երիտասարդ ու առոյգ աստիճանաւորները, որոնք թէեւ թիւով քիչ բայց որակով ու ղործունէութեամբ ղոմբելի են: Բաշ վստահ ենք, որ Վազրը մօտիկ ապագային վազրի նման պիտի ըլլայ լաւագոյն խումբե- ղէն մէկը:

Խումբին աստիճանաւորական կազմը հետեւեալ պատկերով կը ներկա- յանալան, եղբ. Կեդր.— Վ. Սարգիսեան, Յ. Տէրյակոբեան, Յ. Ղա- ղարբեան, Զ. Կեդր.— Վ. Սարգիսեան, Յ. Տէրյակոբեան, Յ. Ղա-

Իր ժողովները կուենայ Ուրբաթ օրերը ժամը 6.30-ին: Կը սպասենք այս խումբի յաջողութեան լուրերուն:

Ե. Եթիմէզեան

ՆՈՒԵՆՈՒՏԱՌԱԿՈՒԹԻՒՆ .—

Եղբ. Աքօ Ոսկերիչեանէ/ Պէյրուկ/ 25 Լ.Ո. նուիրած է թերթիս: Գ. Պէրպէրեանէ ,, 25 Լ.Ո. ,, ,, ,, ,,

Մեր շնորհակալութիւնները այս ազնիւ նուիրատուներուն: ՆՄԱԱԳՐՈՒԹԻՒՆ

# ՍԿԱՌԵՏԱԿԱՆ ԱՐՁԱԳԱՆԳ

Նոր զիւղի բաժնի արժուիկներու կազմը բաժնուած է չորս խումբերու, կը հաշուէ երկու հարիւր արժուիկներ, որոնց հարիւր վաճառուներ յարատեւողներ են եւ քառասունը՝ Պատուոյ Անդամներ՝:

Մասնահիւղին խմբապետուհին է քոյր Արիի Շահինեան: Փոխ խմբապետուհին քոյր Արիի Քէսէրեան: Խումբերը հետեւեալներն են. —

Երէցներ .— ՍՍՄԻ խումբ, կը հաշուէ քառասուն արժուիկ, որոնց երեւոյն հինգը հարատեւողներ են: Վերջին քանի մը շաբաթներուն, այս խումբը բաժնած են չորս խմբակներու, յուսալով մրցակցութիւն ստեղծել եւ հասնիլ սպասուած արդիւնքներու: Այս չորս խմբակներուն պատասխանատուներն են հետեւեալ քոյրերը. — Ա. Ճէմճէմեան, Անուշ Կօշկակարեան, Ս. Սապունճեան եւ Ա. Յակոբեան:

Երկրորդ խումբը՝ Աստղիկ՝ կը հաշուէ յիսուն արժուիկներ, որոնց քառասունը կանոնաւոր հետեւողներ են: Խումբը կը վարեն հետեւեալ քոյրերը. — Մ. Խատէցեան, Ս. Գէորգեան, Տ. Սարգիսեան եւ Թ. Աստուածատուրեան: Վերջերս տեղի ունեցած աստիճանաւորական քննութիւններէն վերջ այս խումբը ունեցաւ իր վեցեակապետներն ալ:

Տորրորդ խումբը՝ Մըջնիկներ՝ ու խումբն է, որ վաճառու հինգ արժուիկներ կը հաշուէ: Կանոնաւոր յարատեւողներուն թիւը յիսուն է: Մըջնիկներու եւ Վնահիտ՝ խումբին պատասխանատու է քոյր Արիի Քէսէրեան: Մըջնիկներ՝ ու աստիճանաւորներն են .— քոյրեր. Զ. Քէսէրեան, Ա. Մարգարեան, Ա. Կոստանեան եւ Լ. Պաղոյեան:

Աւելի կիրակի մեր հաւաքավայրին մէջ կընենք մեր մարզանքը, կ'ունենանք մեր հեղինակաւոր օրհանգիստները պատրաստութեամբ աստիճանաւորներու կամ արծրեկներու կողմէ: Երբեմն կըրճանք նաեւ յարմար երկրներու: Վերջերս ձեռնարկած ենք տոհմիկ պարերու երեկոյցի մը, որ տեղի պիտի ունենայ Փետրուար ամսուան մէջ:

ԱՐՆՈՒԻԿ

Քաղաքի բաժնի Սկաուտական կազմը ունի հինգ խումբեր, որոնք կանոնաւորապէս կ'ունենան իրենց հերթական ժողովներն ու հաւաքոյթները:

Պայլաշուն՝ Խումբը կազմուած երէց սկաուտներէ պատասխանատու ունենալով եղբ. Կարպիս Տէր ներսէսեան: Խումբին աստիճանաւորական կազմը կը բաղկանայ եղբ. ներ Յ. Բրքէսէրեան, Կ. Թոսունեան, Զ. Պոյաճեան, Լ. Ա. Պահարեան, Գ. Ալաճաճեան, Մ. Երզնկացեան, Զ. Պէքէրեան, Թ. Ինճնատոսեան, Մ. Փակազեան:

Խմբապետի եւ աստիճանաւորներու միասնական շանքերով խումբը զովելի դիրքի մը հասած է: Կարելի է ըսել թէ այս խումբը Բալթիկի կողմէ չէ իր նիւթական եւ բարոյական պարտականութիւններու պէջ: Ժողովներու ընթացքին կը կարգաւորեն իր սպասուած թիւները: Կարծես սկզբնաւորութեան այս խումբը ունի անակնկալներով լեզուն սկաուտական յայտադիր միջ:

Յաջողութիւն կը մաղթենք յուսալով, որ մօտիկ ապագային (տիպար խումբ) տիտղոսին կը տիրանայ:



Am

# صُوتُ الْكَيْشِافِ

فِرَّةٌ وَوَرِيَّةٌ لِلْفَوْجِ الْتَمَّ مِنْ بَيْنِ الْتَمَّافِ مَسْرُومَةً  
حَلَبُ

